Կարծիք

«Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից քննարկման է ներկայացվել « **Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին** » ՀՀ օրենքի նախագիծը, որի վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

1. **Արտաքին հետախուզության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ձևավորման և արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմիններիգործունեության նպատակահարմարության վերաբերյալ.**

Ներկայացված նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում արտաքին հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝ 1. Ծառայությունը, 2. Պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի հետախուզության ստորաբաժանումը՝ ռազմական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական և ռազմատնտեսական ոլորտներում, 3. Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) հետախուզության ստորաբաժանումը: Ներկայումս ՀՀ-ում արտաքին հետախուզական գործունեություն իրականացվում է ԱԱԾ և պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ընդ որում, ԱԱԾ կողմից արտաքին հետախուզական գործունեության իրականացմանն օժանդակում են ԱԱԾ կենտրոնական և տարածքային մարմինների համապատասխան ծառայությունները, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումները: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտաքին հետախուզական գործունեությունն արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից իրականացվող գործունեությունն է, որն ուղղված է ՀՀ կենսական շահերին առնչվող տեղեկատվություն ստանալուն և մշակելուն, ՀՀ արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, բնապահպանական և կենսական այլ ոլորտներում պետական քաղաքականությանն աջակցելուն: Վերոնշյալ իրավակարգավորումներն ակնհայտորեն ամրագրում են, որ ըստ էության արտաքին հետախուզության իրականացման ոլորտում ուղղվածության տեսանկյունից համընկնում են Ծառայության և ԱԱԾ գործունեության ուղղությունները: Նախագծով նախատեսված չէ նաև ապագայում ԱԱԾ արտաքին հետախուզական գործունեության ստորաբաժանման լուծարում՝ նոր Ծառայության ամբողջական կազմավորման և բնականոն գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական, կադրային ապահովումից հետո: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ նորանկախ Հայաստանում առկա չէ հետախուզական և հակահետախուզական մարմինների կադրային ապահովման սեփական բազա, մասնավորապես՝ ուսումնական և վերապատրաստման հաստատություններ: Նախագծով առաջարկվում է նոր Ծառայության կադրային ապահովումն իրականացնել առաջնահերթորեն նոր կադրերի պատրաստման միջոցով՝ ուսումնական կենտրոն ձևավորելու եղանակով, ինչն անշուշտ ողջունելի է: Միաժամանակ, նախագծի 21-րդ հոդվածը հնարավոր է համարում նոր Ծառայության կադրային համալրումն իրականացնել ՀՀ իրավապահ այլ ծառայությունների կադրերի, այդ թվում՝ ԱԱԾ միջոցով: Վերոնշյալի լույսի ներքո անհասկանալի և անտրամաբանական է արտաքին հետախուզության ոլորտում իրար կրկնող երկու ծառայությունների գործունեության անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը: Մասնավորապես, եթե կարգավորման ենթատեքստի առումով խնդիր է դրվում ձևավորել արտաքին հետախուզության ապահովման ՀՀ սեփական հնարավորությունները՝ այլ պետությունների ազդեցության գոտում տարիներ շարունակ գտնվող կադրերից ազատվելու նպատակով, ապա ինչու նախագիծը չի ամրագրում ԱԱԾ արտաքին հետախուզության ծառայության լուծարում նոր

Ծառայության ձևավորումից և գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումից հետո: Հարկ է նշել, որ նոր Ծառայությունն ըստ էության իրականացնելու է նաև արտաքին հետախուզությանն աջակցող օպերատիվ-հետախուզական գործունեություն՝ նախագծով ամրագրված լայն լիազորությունների համատեքստում, ինչը ներկայիս պայմաններում անհնար է իրագործել առանց ԱԱԾ կադրային բազայից օգտվելու: Այս տեսանկյունից, նպատակահարմար է ձևավորել սկզբնապես ուսումնական կենտրոն, պատրաստել և վերապատրաստել կադրեր, ինչից հետո ձեռնամուխ լինել պետության անվտանգության ապահովման նոր Ծառայության ձևավորմանը, այլապես կստացվի մարմին առանց կադրերի:

Առաջարկ

- Նախագծով ամրագրել, որ նոր Ծառայության ձևավորումից հետո ԱԱԾ արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումը պետք է լուծարվի՝ գործառույթների ուղղվածության կրկնողությունը բացառելու և ոլորտի արդյունավետ և կենտրոնացված կառավարման համակարգ ներդնելու նպատակով,
- նախագծի անցումային դրույթներում ամրագրել, որ Ծառայությունը սկսում է գործել Ծառայության ուսումնական կենտրոնում պատրաստում և վերապատրաստում անցած ապագա առաջին փուլն անցած ծառայողների՝ ուսումնառությունն ավարտելուց հետո:

2. Ծառայության կազմավորման իրավակարգավորումների վերաբերյալ.

Նախագծի 15-րդ հոդվածի համաձայն՝ Ծառայությունը ՀՀ վարչապետին ենթակա մարմին է, Ծառայության պետը նշանակվում է վարչապետի կողմից, իսկ 19-րդ հոդվածի համաձայն՝ Ծառայության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչապետին: **Հարկ է արձանագրել, որ Ծառայության ձևավորմանն առնչվող իրավակարգավորումների տրամաբանության համաձայն՝ այն ամբողջապես վարչապետին կից կառույց է՝ առանց որևէ այլ մարմնի առջև պատասխանատվության և հաշվետվողականության մեխանիզմների:** Ընդ որում, մի շարք իրավակարգավորումների համաձայն (հոդված 6, մաս 1)՝ Ծառայության նպատակը բացառապես վարչապետին քաղաքական, անվտանգային, տնտեսական, պաշտպանական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական և բնապահպանական բնագավառներում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումն է: Ընդունելի համարելով արտաքին հետախուզական կառույցի ղեկավարի պաշտոնի ձևավորման հարցում գործադիր իշխանության լիազորության առաջնայնության գաղափարը, Ծառայության գործունեության հաշվետվողականության բացակայությունը խորհրդարանում պետք է դիտարկել անընդունելի: Մասնավորապես, ըստ առաջարկվող կարգավորման՝ Ծառայության գործունեության տարբեր արդյունքների վերաբերյալ խորհրդարանի տեղեկացվածության հարցն ուղղակիորեն կախվածության մեջ է դրվում վարչապետի կամաարտահայտությունից (հոդված 9), ինչն անթույլատրելի է բոլոր կառավարման ձևերի և հատկապես՝ խորհրդարանական կառավարման մոդելի պայմաններում: ՀՀ-ում տարիներ շարունակ արձանագրված պրակտիկան ցույց է տվել, որ անվտանգության ոլորտում խորհրդարանական վերահսկողության, տեղեկատվության բացակայության և ընդհանուր առմամբ դերակատարման բացակայությունը ևս հանգեցնում է անվտանգային մարտահրավերներին գործադիր իշխանության կողմից արձագանքելու ոչ ադեկվատ դրսևորումների: Խնդիրն առավել քան կարևոր է այն առումով, որ հանրային կյանքի տարբեր ոլորտներում անվտանգային խնդիրների տեղեկացվածության մակարդակը կարող է պայմանավորել նաև խորհրդարանի օրենսդրական և քաղաքական գործունեության արդյունավետությունը, բարձրացնել իրավական ակտերում անվտանգության բաղադրիչների հաշվառման գործոնը: Անշուշտ անվտանգության ծառայությունների, այդ թվում՝ արտաքին հետախուզական ոլորտի մարմինների հետ փոխհարաբերություններում խորհրդարանականները պետք է պահպանեն օրենքով սահմանված

շրջանակներում անվտանգության ծառայությունների գործունեության արդյունքների գաղտնիության ապահովման սկզբունքը:

Առաջարկ

- Նախագծի 19-րդ հոդվածում ամրագրել, որ Ծառայությունն իր գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետու է նաև խորհրդարանի առջև և փակ ռեժիմով ներկայացնում է կիսամյակային և տարեկան զեկույց,
- քննարկել Ծառայության ղեկավարի նշանակման հարցում խորհրդարանի դրական եզրակացության ստացման հարցը՝ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ